



# ԶԱՎԵԼ ԵՍԱՅԱՆ

## Երբ այլևս չեն սիրեր

Երագր

Իրիկուն էր եւ ձմեռնային մթնշաղը այս մտայլ եղանակին մէջ գրեթէ անմիջապէս տիրոց սենեակին: Երանիկ հանրմ տեղկեահէն ելաւ, կագը վառեց, վարագոյրները գոցեց. կրակը հրահրեց ու նստեցաւ բազմոցին եզերքը: Եւփիմէ դեռ կը շարունակէր բանիլ հակառակ մօրը հրաւերներուն, որովհետեւ զբաղումը կը պարտրկէր աստիճան մը իր խոտվուած զգացումները. դէմը, բազմոցին անկիւնը, մօրեղբայրը եւ Խաչիկ դէմ առ դէմ նստած օղի կը խմէին. իրենց միջեւ դրուած էր պզտիկ ափսէ մը՝ որուն մէջ փոքրիկ պնակներով զետեղուած էին խաշուած լուբիա, ձիթապտուղ եւ բողկ: Երբեմն մօրեղբայր գաւաթ մը օղի կը հրանցնէր քրոջը, հակառակ այս վերջինին յամառ մերժումներուն եւ երբ անոնց վիճաբանութիւնը կ'աւարտէր, դարձեալ լռութիւն կը տիրէր սրահին մէջ:

Եւփիմէ լամբարին դեղնորակ լոյսին տակ տենդագին արագութեամբ կ'աշխատէր իր քով դիզուած եագմաները կ'առնէր մէկիկ մէկիկ, որոնց վրայ կանանչը եւ կապոյտը բանուած ըլլալուն, ներկին պարունակած խէժէն կարծրացած էին, կը տարածէր գանոնք տեղկեահին վրայ, ճկոյթովը կը շտկէր իր ներկելիք մասերը ու թելը սորտած, բագուկը բարձր, վրձինը շնորհալի շարժումով կը խաղցունելով կ'ամբողջացնէր գոյները: Խոշոր կարմիր վարդեր, կամ դեղին անօրինակ ծաղիկներուն ողկոյզներ կը կենդանանային իր վրձինին հարուածներով. թէեւ գործը մեքենական աշխատութիւն մըն էր, այլ սակայն իւրաքանչիւր գործատրուի կրնար մասնաւոր շնորհ մը դնել իր գործին մէջ: Եւփիմէի ձեռքէն ելած եագմաները վառ գոյներ կ'ունենային ու վարպետը իր լաւ

տրամադրուած օրերուն քանիցս ըսախ էր իրեն:

Քեզի պէս պայծառ կը բանիս, Եւփիմէ՛...

Քանի օղիին գաւառները կը պարպուէին, այնքան Մարտիկ տայի շատախօս կը դառնար, մինչ Խաչիկ լուռ ու մունջ կը խմէր, բայց իր աչքերը կը վառէին ու նայուածքը հետզհետէ աւելի համարձակութեամբ կը դառնար Եւփիմէին կողմը եւ երկարօրէն կը նայէր. հակառակ ցուրտին, անոր այտերը այնքան կարմրած էին որ կարծես կ'այրէին, շրթները կը չորնային եւ երբեմն լեզուին ձայրովը կը թրջէր գանոնք. իր ճերմակ եւ գիրուկ վիզին վրայ սաթի հատիկները շուք կը ձգէին՝ աւելի շեշտելով անոր սպիտակութիւնը: Ու Խաչիկ կը նայէր, այնքան սիրտը թունդ կ'ելլէր, տենդագին ջերմութիւն մը մինչեւ ճակատը կը բարձրանար ու իր յուզումնքը ծածկելու համար՝ ծխախոտին տուփը կը բանար եւ դանդաղօրէն սիկատէթ մը կ'ոլորէր:

Տաժանելի օր մը անցուցեր էր, ժամեր ու ժամեր մինչեւ ծունկերը ջուրին մէջ՝ աշխատէր էր ծովին եզերքը ու վերադարձին թաց եագմաներու բեռը կոնակին վրայ՝ բարձրացեր էր գառիվերէն. աշխատութիւնը այնքան ծանր էր որ հակառակ խայթող ցուրտին՝ քրտինք թափած էր ու երբ անգիտակից քայլերով դէպի գինետուն կ'երթար կազդուրուելու համար, յիշեր էր Եւփիմէի տուած խոստումը:

Մարդուս խօսքը բերնէն կ'ելլայ:

Մարտիկ տայի Խաչիկը տեսնելուն՝ առաջարկեր էր տունը երկու հետ խմել. ինքն ալ անկարող էր գինետուն երթալու, քանի օրերէ ի վեր յօդացաւը գինքը կը տանջէր. ինքն իր վրայ կզկտուած՝ դժուարաւ մինչեւ անկիւնի նպարավաճառը կ'երթար բան մը գնելու համար: Հիւսիսային հովը փարատեր ու ցրուեր էր ամպերը եւ այլեւս չէր ձիւներ. երկնքին վրայ գորշորակ ու սեւ ծուէններ, հալածական եւ պատառատուն, արագ ընթացքով կ'անցնէին ու կ'անհետանային:

Բայց օրն ի բուն ու մանաւանդ գիշերը մինչեւ լոյս հովը արձակուած գազանի պէս կը սուրար մոնջելով. երբեմն հագար բերնով կը գոռար, երբեմն ալ միայնակ եւ քինախնդիր ոգիի մը պէս գետնին վրայ սողալով յանկարծ կը խոյանար

գալարուելով եւ կը սուլէր կամ պատուհաններուն ետեւէն լալագին մրմունջով մը կը հետեծէր: Ու տուները կը ցնցուէին, դիզուած ձիւները մէկ տանիքէն միւսը կը քշուէին, իսկ պարտեզներուն մէջ չոր ծառերը այսահարներու պէս կը թոթուէին, մինչ ճիւղերն ի վար կախուած սառոյցները բիրեղանալով՝ առանց հալելու կը փոշիանային եւ կը ցրուէին յարատեւօրէն փշող քամիին ուղղութեամբ:

Ասեղին ծակէն ցուրտ կը մտնայ կոր ըսաւ Երանիկ հանրմ սարսռալով:

Խաչիկ նայեցաւ անոր՝ անսահման գորովանքով, ամէն ինչ եւ ամէն բան որ կապ ունէր Եւփիմէին հետ՝ իրեն պաշտելի դարձեր էր:

Կրակին քովը չգա՞ս, ըսաւ դողացող ձայնով մը:

Երանիկ հանրմ թէւ դեռ ցրտութեան երեւոյթ մը կը պահէր Խաչիկին նկատմամբ, բայց ներքնապէս սիրտը կակուղցեր էր. գէշ չէր Եւփիմէին ուզածն էր դեռ ի՞նչ ըլլար. ասանկ ժամանակներու մէջ ո՞վ տէր պիտի ըլլար անօժիտ աղջկան մը: Ամբողջ օրը տեղկեահին առաջք երկու կիները դէմ դէմի նստած՝ եռանդով կ'աշխատէին ու կը խօսէին, մայրը կ'ուզէր իր բուն զգացումները յայտնել, բայց շուտով տեղի տուած չըլլալու մտահոգութեամբ կողմնակի կ'ընէր միայն:

Կ'ուզեմ քի ատ փարահին մէջէն բան մը առնես, Եւփիմէ՛, ըսեր էր աղջկանը՝ Խաչիկին փոխ տուած դրամին ակնարկելով՝

Եւփիմէ կը զգար մօրը լաւ տրամադրութիւնը եւ գոհ էր ինքն ալ իր կարգին խօսքը Խաչիկին վրայ կը բերէր. վերջապէս մայրը ըսեր էր.

Գինովութիւնը չըլլայ նէ, ի՞նչ ունի ես ալ բան մը ըսած չունիմ. Էրիկմարդուն աղուորը ի՞նչ ընեմ, կտրիճութիւնը պէտք է...

Եւփիմէ յիշելով մօրը խօսքերը, ներկին ամանը եագմաին վրայ տեղաւորցուցած պահուն՝ կը նայէր Խաչիկին ու կը մտածէր ոգետրութեամբ:

Կտրիճ՞... ո՞վ կը տարակուսէր աստոր վրայ անոր պէս երիտասարդ մըն ալ կար թաղին մէջ. լերան պէս մարդ էր... Է՛հ, իրաւ է, վրայ գլուխ չիկար, վախտին

երիտասարդը չէր, գիր, ուսում չունէր, բայց կոզին՝ ժամը վառուած ճրագի պէս պայծառ էր. հիմակուան ճահիլներուն պէս արեւէն անճրկած չէր. նեղ օրի, գէշ բրի, տէր տիրական կը կանգնէր ընտանիքին. աս չըլլար՝ ան կ'ընէր, կինը, գաւակները հալխուն կարօտ չէր դարձներ... մինակ ուժը լուսը հերիք էր, պէտք ըլլար, կը գրկէր տունը տանը վրայ կը դնէր...

Գաղջ եւ գորովագին զգացում մը համակեց Եւփիմէի հոգին. աչքերը խտղտացին, թուլութիւն մը զգար, վրձինը ձգեց ներկի ամանին մէջ եւ պահ մը անգործ ու անշարժ՝ զգաց, որ հոգին կը վերանար սիրաբաղձ երագի մը մէջ:

Մայրն ու Խաչիկ իրարու հետ կը խօսակցէին գործի վրայ ու Մարտիկ տայի ալ բոլորովին գինովցած՝ թէն դժուրաւ կը հետեւէր անոնց, բայց զանոնք կ'ընդհատէր ամէն բոլոր աննշան հարցումներով. երբեմն ալ իր միտքը կ'անջատուէր ու ինքնիրեն կը հետեւէր իր մտմտութիւններուն. երբեմն կը փղձկէր իր վիճակին վրայ, կը սրտմտէր ու գլուխը կը շարժէր այնպիսի ուժգնութեամբ որ ֆէսին ծոպը ետեւէն դէպի առաջ կ'ոստնուր եւ կը տարածուէր ճակատին վերեւ:

Օ՛Ֆ... օ՛Ֆ... Խաչի՛կ, օղլո՛ւմ, ես ալ ասանկ ըլլալու մա՛րդ էի. տունէն դուրս ելած չունիմք, կնիկ ապլա եղանք:

Զինքը մխիթարելու համար՝ Երանիկ հանրմ ամէն իրիկուն օղիին ափսէն կը շիտկէր, ճար ճարակ կ'ընէր, շիկայէն կը ստեղծէր, բան մը պակաս չէր ընէր, բայց տայիին գերագոյն երագն էր գինետունի սրահը. օրը քանի մը անգամ աչքին առաջքը կուգային ծխախտտով եւ զանազան արտաշնչումներով անթափանց մթնոլորտին մէջ պզտիկ եւ ցած սեղանները՝ որոնց մակերեսը ողորկ դարձացծ էր իւղոտ կեղտէն: Իրիկուան դէմ այդ տեսիլքները արտակարգ ուժգնութիւն մը կը ստանային. ինքզինքը կը տեսնար հոն կարկամած սրունքներով դանդաղօրէն յառաջանալը դէպի նստարանը, կը տեսնէր հետզհետէ. դիմացը դրուած օղիի շիշը՝ որուն դեղնորակ հեղուկը կը պսպղար մէջտեղէն կախուած լամպային լոյսէն, մինչ ռնգունքը հեշտալիօրէն կը գրգռուէին կրպակին խորը տապակուող ո եւ է ձկնեղէնի հոտերէն. ինքը կը գոհանար յաճախ խաշուած լուբիայի եւ ձիթապտուղի մէզէով, բայց անոնք ալ անանկ համ մը ունէին որ տունը չէր գտներ երբեք:

Երբեմն այնքան կը գայրացնէր Երանիկ հանրն իր դժգոհութիւններով, որ անիկա ինքզինքէն ելած՝ կը պօռար երեսն ի վեր:

Էրիկ մարդ չէ՞ք մի՛, կրողը տեսնայ երեսնիդ... ամենէն աղէկը տեղը մնայ, տասը մատդ մոմ ընես, օգուտ չընէր:

Երանի՛կ, գոչեց վերջապէս Մարտիկ տայի, քրոջը եւ Խաչիկին խօսակցութիւնը կտրելով, մեզի մէյմէկ խահուէ չեփե՞ս:

Թող Եփիմէն ելլայ եփէ, ըսաւ Խաչիկ երկշտութեամբ, ու անոր կողմը դարձուց իր քաղցր եւ թափանցող նայուածքը:

Խաչիկին իրեն ուղղած խօսքերը լսելով, Եփիմէն ձգեց գործը, ոտքի ելաւ, պահ մը կեցաւ թէ՛ թմրած ոտքերուն համար եւ թէ՛ որովհետեւ սրտին զարկը կը լսէր ու չէր համարձակեր վեր քարձրացնել աչքերը:

Պօ՛յդ սիրեմ, հոգի՛ս ըսաւ մտքէն Խաչիկ եւ խոր հառաչանք մը թաւ կուրծքէն:

Հիմակ որ իրենց սրտին գաղտնիքը մէջտեղ ելած էր, այլեւս չէին համարձակեր իրարու հետ առանձին խօսիլ. բայց անլի սրտագին զգացումով մը կապուած էին իրարու. իրենց կուրծքին ներքեւ սիրտերը մէկ չափով կը թնդային եւ իրենց գաղտագողի եւ արագ նայուածքները լեցուն էին սիրով եւ տարփանքով: Հուժկու եւ կենսաւեր խոյանք մը կը միացնէր զիրենք ու տեսակ մը արբեցութիւն մշուշի պէս կը ծածանէր իրենց եւ իրականութեան միջեւ. կը մոռնային բոլոր կարելի դժբաղդութիւնները, կը մոռնային հրէշային չքաւորութիւնը չէին մտաբերեր իսկ թէ օր մը իրենք ալ ուրիշներու պէս պիտի ըլլային, այլ ջերմեռանդօրէն կը հաւատատային թէ արեւը անլի տաք եւ անլի պայծառ պիտի ըլլար իրեն համար, թէ լոյսի պէս պիտի ծագէին, ծաղիկներու պէս պիտի ծաղկէին, ու իրենց խոնարհ հոգիները թեւեր առած կը սաւառնէին երջանկութեան նոյն երազին մէջ: